# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"11 "հունվարի 2012թ. № 3-Ա

## «ԽՈԶՆԱՎԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ - ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012թ. հունվարի 9-ի <<Խոզնավարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության՝ օրենսդրության պահանջների համապատասխանության և ընտրված տնօրենի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու մասին>> N 2-Ա որոշման, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1.<< Խոզնավարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի՝ Աշոտ Գևորգյանի ընտրության (նշանակման) կապակցությամբ կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Սլավիկ Շափաղաթյանին 2012թ հունվարի 12-ից ազատել տնօրենի պաշտոնակատարի պարտականություններից:

2.Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով

| | |
|---|---|
| Զաքարյան Համլետ | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի նախագահ) |
| Ասատրյան Նորա | Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ |
| Ավետիսյան Համլետ | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ |
| Գևորգյան Աշոտ | <<Խոզնավարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն (ընդունող) |
| Շափաղաթյան Սլավիկ | <<Խոզնավարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար (հանձնող) |

3.Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

4.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ.հունվարի 11
ք. Կապան

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

«10» 0 2012
N
օր.N

«10» 01 2012
N 2
օր. N

## Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը և Սյունիքի մարզպետարանը, ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ սեպտեմբերի 22-ի N1500-Ն որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2002թ հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» N 48 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման» կարգի 34-րդ կետի պահանջներով՝ Սյունիքի մարզպետարանին կառավարական քաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը Սյունիքի մարզպետարանին մատուցում է կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություն (այսուհետ՝ «Ծառայություն»), իսկ Սյունիքի մարզպետարանը վճարում է այդ Ծառայության դիմաց՝ սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:

1.1 Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2012թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

2.1 Ծառայության որակյալ, անխափան մատուցում և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,

2.2 Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,

2.3 Սյունիքի մարզպետարանում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ՝ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,

2.4 Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայության մատուցումն ու դրա հետ կապված աշխատանքների կատարումը՝ Սյունիքի մարզպետարանի կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո,

2.5 Կառավարական քաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե Սյունիքի մարզպետարանը չի կատարում Ծառայության դիմաց ամենամսյա բաժանորդային վճարումը՝ ըստ սույն համատեղ հրամանի 3.4 և 3.5 կետերի:

3. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

3.1 ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը՝ ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների,

3.2 Կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,

3.3 Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը,

3.4 Ծառայության դիմաց բաժանորդային նախորդ ամսվա վարձի վճարումը՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ ամսվա 10-ը՝ համաձայն ՀՀ Կառավարության 22.09.2011թ. N1500-ՆԳ որոշման: Վճարումները կատարվում են դրամով՝ հետևյալ կերպ.

Աղյուսակ 1

| № | ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ<br>ք.Կապան | Կառավարական քաղաքային կապ | Ընդամենը |
|---|---|---|---|
| 1. | Սյունիքի մարզպետի աշխատասենյակ | 1 x 225 000 | 225 000 |
| 2. | Կապի օպերատորից միջքաղաքային կապուղու վարձակալման տարեկան արժեք՝<br>100 կմ-ից ավելի | | 260 000 |
| 3. | կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ | 1 x 100 000 | 100 000 |
| 4. | ընդամենը | | 585 000 |
| 5. | | | հինգ հարյուր ութսունհինգ հազար դրամ |

Աղյուսակ 2

| № | ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ<br>ք.Գորիս | Կառավարական քաղաքային կապ | Ընդամենը |
|---|---|---|---|
| 6. | Սյունիքի մարզպետի.աշխատասենյակ | 1 x 225 000 | 225 000 |
| 7. | Կապի օպերատորից միջքաղաքային կապուղու վարձակալման տարեկան արժեք՝<br>100 կմ-ից ավելի | | 260 000 |
| 8. | կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ | 1 x 100 000 | 100 000 |
| 9. | ընդամենը | | 585 000 |
| 10. | | | հինգ հարյուր ութսունհինգ հազար դրամ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Գումարային՝ աղյուսակ 1+աղյուսակ 2 | | | |
| 2. | ենթակա է վճարման՝ | | | 1 170 000 |
| 3. | | | | մեկ միլիոն երեք հարյուր իննսունհինգ հազար դրամ |

3.5 Բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին՝ ամեն ամիս,

3.6 Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում՝ Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո,

3.7 ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումը՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

| | |
|---|---|
| ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն | Սյունիքի մարզպետ |
| ______________________ Գ. Հակոբյան | ______________________ Ս.Խաչատրյան |
| ք.Երևան 375001, Նալբանդյան 104 ԱԱԾ<br>ՀՀ ՖԻՆ. նախ.գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին<br>հ/հ 900018301011<br>հվհհ 01507079 | ք.Կապան, Գարեգին Նժդեհի 1<br>Սյունիքի մարզպետարան<br>Կապանի գանձապետական բաժանմունք<br>հ/հ 900311080049<br>հվհհ 09415375 |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Կառավարական կապի և տեղեկատվության վարչություն հեռախոս՝ 1-99,

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

«___»_______2012
N
օր.N

«10» 01 2012
N2-Ա
օր. N 2

## Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը և Սյունիքի մարզպետարանը, ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ սեպտեմբերի 22-ի N1500-ՆԳ որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2002թ հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» N 48 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման» կարգի 34-րդ կետի պահանջներով՝ Սյունիքի մարզպետարանին կառավարական քաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը Սյունիքի մարզպետարանին մատուցում է կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություն (այսուհետ՝ «Ծառայություն»), իսկ Սյունիքի մարզպետարանը վճարում է այդ Ծառայության դիմաց՝ սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:

1.1 Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2012թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

2.1 Ծառայության որակյալ, անխափան մատուցում և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,

2.2 Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,

2.3 Սյունիքի մարզպետարանում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ՝ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,

2.4 Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայության մատուցումն ու դրա հետ կապված աշխատանքների կատարումը՝ Սյունիքի մարզպետարանի կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո,

2.5 Կառավարական քաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե Սյունիքի մարզպետարանը չի կատարում Ծառայության դիմաց ամենամսյա բաժանորդային վճարումը՝ ըստ սույն համատեղ հրամանի 3.4 և 3.5 կետերի:

3. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

3.1 ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը՝ ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների,

3.2 Կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,

3.3 Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը,

3.4 Ծառայության դիմաց բաժանորդային նախորդ ամսվա վարձի վճարումը՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ ամսվա 10-ը՝ համաձայն ՀՀ Կառավարության 22.09.2011թ. N1500-Ն.Գ որոշման: Վճարումները կատարվում են դրամով՝ հետևյալ կերպ.

Աղյուսակ 1

| № | ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ<br>ք.Կապան | Կառավարական քաղաքային կապ | Ընդամենը |
|---|---|---|---|
| 1. | Սյունիքի մարզպետի աշխատասենյակ | 1 x 225 000 | 225 000 |
| 2. | Կապի օպերատորից միջքաղաքային կապուղու վարձակալման տարեկան արժեք՝<br>100 կմ-ից ավելի | | 260 000 |
| 3. | կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ | 1 x 100 000 | 100 000 |
| 4. | ընդամենը | | 585 000 |
| 5. | | | հինգ հարյուր ութսունհինգ հազար դրամ |

Աղյուսակ 2

| № | ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ<br>ք.Գորիս | Կառավարական քաղաքային կապ | Ընդամենը |
|---|---|---|---|
| 6. | Սյունիքի մարզպետի աշխատասենյակ | 1 x 225 000 | 225 000 |
| 7. | Կապի օպերատորից միջքաղաքային կապուղու վարձակալման տարեկան արժեք՝<br>100 կմ-ից ավելի | | 260 000 |
| 8. | կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ | 1 x 100 000 | 100 000 |
| 9. | ընդամենը | | 585 000 |
| 10. | | | հինգ հարյուր ութսունհինգ հազար դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Գումարային՝ աղյուսակ 1+աղյուսակ 2 | | |
| 2. | Ենթակա է վճարման՝ | | 1 170 000 |
| 3. | | | մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ |

3.5 Բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին՝ ամեն ամիս,

3.6 Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում՝ Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո,

3.7 ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումը՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

**ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն**

_________________________ Գ. Հակոբյան

ք.Երևան 375001, Նալբանդյան 104 ԱԱԾ
ՀՀ Ֆին. նախ.գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900018301011
հվհհ 01507079

Կ.Տ.

**Սյունիքի մարզպետ**

Ս.Խաչատրյան

ք.Կապան, Գարեգին Նժդեհի 1
Սյունիքի մարզպետարան
Կապանի գանձապետական բաժանմունք
հ/հ 900311080049
հվհհ 09415375

Կ.Տ.

Կառավարական կապի և տեղեկատվության վարչություն ______ Ռեհամիտ (?) 1-99